ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնք
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 նոյեմբերի 2018թ N 123 –Ա

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԲ ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑ 6, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-041-0184-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐՏԱԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԲԱՂԻՆՅԱՆԻՆ, ԱՍՏՂԻԿ ՀԱՅԿԱԶԻ ՄԱՄՅԱՆԻՆ, ԱՐԱՄԱՅԻՍ ԱՐՏԱԿԻ ԲԱՂԻՆՅԱՆԻՆ ԵՎ ՄԵՐԻ ԱՐՏԱԿԻ ԲԱՂԻՆԱՅՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված 2-րդ և 4-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թ. մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշման 2-րդ մասի 13-րդ կետի Ա և Բ ենթակետերի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինական ճանաչել Արտակ Արամայիսի Բաղինյանին /ծնվ.՝ 13.11.1967թ./, Աստղիկ Հայկազի Մամյանին /ծնվ.՝ 17.03.1966թ./, Արամայիս Արտակի Բաղինյանին /ծնվ.՝ 03.10.1991թ./ և Մերի Արտակի Բաղինայնին /ծնվ.՝ 31.01.1996թ./ պատկանող և իրենց կողմից կառուցված Կողբ համայնքի Կողբ գյուղի փողոց 6., թիվ 2 հասցեում 11-041-0184-0021 կադաստրային ծածկագրով 0,08813 հա հողամասում գտնվող (օժանդակ շինությունները՝ տաղավարները 35,58 քմ և հյուրատունը իր աստիճանավանդակով 47,08 քմ արտաքին և 37,92 քմ ներքին չափերով) ինքնակամ շինությունները:
2. Օրինականացվող կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու

առողջությանը, կառուցված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Կառուցումն իրականացրած անձիք Կողբի համայնքապետարանի 900395104111 գանձապետական հաշվին պետք է վճարեն 11.750 դրամ օժանդակ շինությունների (տաղավարների) և 25.900 դրամ հյուրատան օրինականացման համար, ընդհանուր՝ 37.650 դրամ:
4. Սույն որոշման ընդունելու օրվանից հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի վաճառքի գները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *07619249*